ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N5
«ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 24 դեկտեմբերի 2018թ.

ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Բաբաջանյան, Ն.Կոլտուխչևա
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան

1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>
(Կ.Հայրապետյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկություններիգնահատման մասին
3. Մերժված հայտի մասին:
4. Բանակցությունների կազմակերպման մասին
5. Պայմանագիր կնքելու որոշման մասին
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. <u>ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկությունների գնահատման մասին</u>
(Կ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ 17.12.2018թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ <<ՋԻ ԹԻ ՍԻ>> ՍՊԸ-ի, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 5667 ՀՀ դրամի չափով, ինչը գերազանցում է Հրավերի 2-րդ մասի 2.1 կետի 2-րդ ենթակետով սահմանված ժամկետանց պարտավորությունների չափը:

«ԿԵԱՊ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-18/17» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին են ներկայացվել սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	<u>Ընտրված մասնակիցներ ճանաչել՝</u>	
1	<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ	1,2,4,6,12,13,15,17,18,20,23,29,30,39,42,47,48,49,53,58,60,

		61,63,68,72,78, 85,86,89-92,2.1,2.3,2.7,2.9,2.10,2.11,2.12,2.14,2.15-2.19,2.22,2.25-2.29,2.33,2.34
2	<<ԱԼՖԱ ՖԱՐՄ>> ՓԲԸ	9,51,55,71,76,80,82,87,88,2.2,2.4,2.5
3	<<Դեզսերվիս>> ՍՊԸ	34,38,46,96
Երկրորդ տեղ զբաղեցնող ճանաչել՝		
1	<<Նատալի Ֆարմ>> ՍՊԸ	34,35,46,69,76,88,2.2,2.3,
2	<<ԱԼՖԱ ՖԱՐՄ>> ՓԲԸ	29
3	<<Դեզսերվիս>> ՍՊԸ	9,39,71,92

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

3. Մերժված հայտի մասին
(Կ.Հայրապետյան)

Հիմք ընդունելով 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետը, Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել <<ՋԻ ԹԻ ՍԻ>> ՍՊԸ -ի հայտը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: 04 մայիսի 2017թ.-ի 526-Ն Որոշման կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Բանակցությունների կազմակերպման մասին
(Կ.Հայրապետյան)

Քանի որ 8,24,65,67 չափաբաժինների համար հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցների չափը , ուստի հանձնաժողովը որոշել էր.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի համաձայն վերը նշված չափաբաժինների համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հայտերի բացման նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով նիստ հրավիրել ս.թ. 26.12.2018թ-ին ժամը 10:30-ին, բանակցությունների վարման համար ժամանակ սահմանել 15 րոպե:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. <u>Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին</u>
(Կ.Հայրապետյան)

Բացառությամբ՝ 8,24,35,65,67,75,93 չափաբաժինների՝ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել հրապարակման հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

6. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:</u>
(Կ.Հայրապետյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել բանակցությունների վարման օրը «, հասցե՝ <<Կառլեն Եսայանի անվան պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի շենք՝ ք.Երևան, Ներսիսյան 7/1 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Կ.Հայրապետյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ.Բաբաջանյան,

Ն.Կոլտուխչևա

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Հակոբյան

ProTender©
www.protender.am